№ 74 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 4 — 1889 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 4 № 74

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները՝ 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Յովհաննէս Նիկողայոսեան, Աննա Գէորգեան, Շուշանիկ և Աշխէն Յովհաննէսեան ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՆԵՐԸ, սրտի ցաւով յայտնելով առաջին երկուսը՝ իրանց որդու, և վերջին երկուսը իրանց եղբօր՝ ԳԷՈՐԳ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆԻ ՄԱՀԸ, խնդրում են ազգականներին և ծանօթներին ներկայ լինել յուղարկաւորութեանը, որը տեղի կունենայ Միքայէլեան հիւանդանոցից (գտնվում է Միքայէլեան փողոցի վրա) դէպի Կուկիայի Թանդոյեան եկեղեցին, յուլիսի 4-ին, առաւօտեան 10 ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վիպական գրականութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նովոյց. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարիայի հայերը. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարիզից.

ՎԻՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Մօտ քսան տարի է արդէն, որ մեր գրականութեան մի նշանաւոր ճիւղը՝ վիպագրութիւնը, իր արծարծած խնդիրներով և իր տենդենցիաներով սերտ կերպով կապվելով մեր մամուլի հետ, լրացրել է հայոց մամուլի մէջ յարուցված այս և այն խնդիրը, մշակել է մամուլի ուշադրութեանն արժանացած այս և այն հարցը, դառնալով այդպիսով նրա մի անբաժան մասը։

Անկասկած դրա գլխաւոր պատճառն այն է, որ մեր գրականութեան զարգացման վերջին շրջանում, հայոց մամուլը, իր միքանի ներկայացուցիչների և օրգանների շնորհով, հսկայական ներդործութիւն ունեցաւ հայ գրողների, ինտելիգենցիայի և ընդհանրապէս մեր մտաւոր կեանքի վրա։

Այդ երևոյթը ունի իր պարզաբանող պատճառները։ Հայոց մամուլը իր զարգացման վերջին շրջանում արդէն համախմբելով իր շուրջը հայոց գրականութեան ասպարիզում բոլոր գործողներին, և կապելով իր հետ ամբողջ հայոց ինտելիգենցիան, մի կողմից սկսեց արծարծել այն նոր խնդիրները, որոնց իրականացնելը մի անհրաժեշտութիւն պէտք է համարել մեր կեանքի համար, իսկ միւս կողմից հաւատարիմ արձագանք հանդիսացաւ այն բոլոր ձգտումների, որոնք կարող են գոյութիւն ունենալ մեր ժողովրդի մէջ, նրա տնտեսական և հասարակական հանգամանքների պատճառով։

Ահա հէնց մեր մամուլի այդ ուժգին և ազդեցիկ գործունէութեան շնորհով, մեր վիպագրութիւնը, սկսելով զբաղվել հասարակական ժամանակակից խնդիրների ուսումնասիրութեամբ, միացաւ մամուլի հետ և իր պաշտպանած տենդենցիաներով, իր արծարծած մտքերով, իր յարուցած խնդիրներով, կամ լրացնում էր մամուլի յարուցած կենդանի խնդիրները և կամ աւելի էր սկսում արծարծել և մտցնել ժողովրդի մէջ այս և այն միտքը, այս և այն համակրելի ձգտումը։

Այդ պատճառով իսկ ոչ թէ միայն զարմանալի չէ, այլ և բնական է, որ մեր վիպագրութիւնը համարեա ամբողջապէս տենդենցիական ուղղութիւն ունենալով, իր մէջ մտցրեց հրապարակախօսական մեծ տարր, զոհելով այդ բանին այն, ինչ որ գրականութեան գեղարուեստական մասն է համարվում։ Մեր այդ խօսքերին ապացոյց կարող են համարվել մեր ամենանշանաւոր և ամենաժողովրդական վիպագրողի՝ հանգուցեալ Րաֆֆիի գրական գործունէութիւնը և աշխատութիւնները, որոնք ահագին ներգործութիւն ունենալով մեր ժամանակակից վիպական գրականութեան վրա՝ այդ ուղղութեան են ենթարկել համարեա մեր ամբողջ վիպագրութիւնը։

Համարել այդ երևոյթը մի պակասութիւն մեր վիպական գրականութեան համար ներկայ հանգամանքներում, կը նշանակէ շատ վերացական հասկացողութիւն ունենալ ընդհանրապէս գրականութեան մասին, կը նշանակէ շատ քիչ կապ տեսնել իրական կեանքի և գրականութեան մէջ։

Ընդհակառակը, մեր վիպական գրականութեան այդ ուղղութեանն ենք պարտական, որ մեր կեանքի հետ կապ ունեցող զանազան թարմ հարցերը, ինչպէս են ժողովրդի կեանքի ուսումնասիրութիւնը, տնտեսական հարցերը, պանդխտութեան խնդիրը, հին և նոր դպրոցի խնդիրը, ընտանեկան ամուսնութեան և կրօնափոխութեան հարցերը, և ուրիշ շատ կարևոր հասարակական հարցեր միանգամից ամբողջ գրականութեան՝ թէ մամուլի և թէ վիպագրութեան առանձին ուշադրութիւնը գրաւելով մի և նոյն ժամանակ գրաւեցին և հասարակութեան ուշադրութիւնը։ Հակառակ դէպքում, մեր կարծիքով, դժուար թէ այն բոլոր խնդիրները, որոնք բաւական արդէն հասունացած են համարվում մեր կեանքի մէջ, կարողանային մտնել մեր ժամանակակից կեանքի հերթական խնդիրների շարքը։

Սակայն այդպիսի ուղղութիւն ընդունելով, արձագանք տալով ժամանակակից խնդիրներին, միանալով պուբլիցիստիկայի հետ այս և այն հարցը մշակելու համար, վերջապէս ձգտելով այս և այն տենդենցիային և բուն ժամանակակից հասարակական խնդիրներին ծառայելու, մեր վիպագրութիւնը ոչ մի կերպ իրան թոյլ չը պէտք է տայ դաւաճանելու մէկ կամ միւս դաղափարին, այս և այն հասարակական ձգտմանը, իջեցնելով վիպագրութիւնը շատ ստոր աստիճանների և դարձնելով նրան ոչ թէ միայն նեղ, կուսակցական, այլ նոյն իսկ անձնական, անհիմն և անմիտ հայեացքների արտայայտութեան միջոց.... Այդպէս անել, կը նշանակէ վիպական գրականութիւնը իր բարձրութիւնից վայր գլորել, և նրան միանգամայն վնասակար ուղղութիւն տալ...

Մեր վիպական գրականութիւնը, կրկնում ենք, վերջին քսան տարիների ընթացքում, իր ամենափառաւոր ներկայացուցիչներից սկսած մինչև նոր սկսողները՝ արձագանք է տուել հասարակական զանազան խնդիրներին և տենդենցիաներին, և դրանով նա ահագին ծառայութիւն է մատուցել. դա մեր վիպական գրականութեան ոյժի և ազդեցութեան աղբիւրն է։ Մեզ մնում է միայն ցանկանալ, որ այդ նոյն վիպական գրականութիւնը, առանց ծուռ ճանապարհներով ընթանալու, շարունակէր ծառայել մեր ժամանակակից, հասարակական, թարմ և կենդանի հարցերի մշակութեան և պարզվելուն, առանց վախենալու, թէ դրանով գեղարուեստը զոհված կը լինի։ Գեղարուեստը չէ կարող զոհված լինել այն դէպքում, երբ վէպը կամ վիպագրութիւնը ծառայում է զանազան տենդենցիաներին, կեանքից բղխող այս և այն հարցին։ Գեղարուեստը զոհվել և ոտի տակ ընկնել կարող է միայն այն ժամանակ, երբ վիպագրութիւնը դիմակաւորվելով՝ սկսում է ներբողի, կամ պասկվիլի ու պամֆլետի դեր կատարել.....

Խ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

V

Յունիսի 27-ին, ժամը 2-ին կէսօրից յետոյ բացվեց ազգային լուսաւորութեան մինիստրութեան մեծ դահլիճում «Գրական կոնգրէսի» վերջին, փակման նիստը, պ. Ժիւլ Սիմոնի նախագահութեամբ։ Դահլիճը լի էր ժողովականներով, որոնց թւում և բազմաթիւ կանայք, այնպէս որ կարելի է ասել որ այդ ժողովում հանդիսականների թիւը աւելի շատ էր, քան թէ կոնգրէսի նախընթաց նիստերում։ Նախագահական սեղանի մօտ, Ժիւլ Սիմոնի կողքին նստած էր մինիստրութեան ներկայացուցիչ պ. Կաւիէ Շարմ, իսկ աթոռների առաջին կարգում նստած էր ազգային լուսաւորութեան մինիստր, պ. Ֆալիէր։ Պ. Ժիւլ Սիմոն բացեց նիստը, յայտնելով, որ ներկայ նիստում վիճաբանութիւններ չը պէտք է լինեն, քանի որ նիստը փակման նիստ է և հանդիսաւոր նիստ է, և ապա խնդրեց քարտուղարին կարդալ անցեալ նիստի արձանագրութիւնները, իսկ ժողովականներից ցանկացողներին հրաւիրեց իրանց նկատողութիւններն անել յիշեալ արձանագրութիւնների մասին։ Մի քանի նկատողութիւններից յետոյ խօսք տրվեց փոխ-նախագահ պ. Բասիլբոնին։ Պարոնը մի գեղեցիկ ճառի մէջ նկարագրեց «Գրական կոնգրէսի» նշանակութիւնը և շնորհակալութիւն յայտնեց կոնգրէսի բոլոր անդամներին, որոնք մասնակցեցին կոնգրէսի աշխատանքներին։ Պ. Բասիլբոն սկսեց իր ճառը հետևեալ խօսքերով։ «Դժուար է այն մարդու դրութիւնը, որը խօսում է Ժիւլ Սիմոնից առաջ, դժուար է և այն մարդու դրութիւնը, որը խօսում է Ժիւլ Սիմոնից յետոյ։ Նրանից առաջ խօսողը գիտէ, որ ամենքը սպասում են նրա ճառին, իսկ նրանից յետոյ խօսողը գիտէ թէ Ժիւլ Սիմոնից յետոյ մարդիկ այլ ևս ոչ ոքին չեն ուզում լսել։»

Սրանից յետոյ պ. Բասիլբոն առաջարկեց կոնգրէսի երկու անդամներին ընդունել պատուաւոր անդամներ «Գրական և գեղարուեստական միջազգային ընկերութեան»։ Այդ առաջարկութեանը Ժիւլ Սիմոն պատասխանեց, որ թէև անձամբ համակրում է առաջարկութեան և կատարելապէս արժանի է գտնում յիշեալ երկու անձանց ընկերութեան պատուաւոր անդամներ կոչվելու, բայց իրան իրաւունք չէ համարում թոյլ տալ որ մի հարց, որը առաջարկված չէ եղել անցեալ ժողովում և ներկայացրած չէ եղել նախագահական յանձնաժողովին, այլ բոլորովին նոր հարց է,—քուէարկվի ներկայ նիստում։ Բացի սրանից ընկերակցութեան պատուաւոր անդամներ ընտրելը կոնգրէսի գործ էլ չէ, այլ դրողների միջազգային ընկերակցութեան գործ է, քանի որ կոնգրէսը բաղկացած է երկու ընկերութիւններից՝ Ֆրանսիական գրողների ընկերութիւնից և գրական միջազգային ընկերակցութիւնից։ Այդ պատճառով պ. Ժիւլ Սիմոն առաջարկեց (և նրա առաջարկութիւնն ընդունվեց), որ միջազգային ընկերակցութեան անդամները, երբ կոնգրէսի նիստը կը փակվի, մնան դահլիճում և կազմելով յատկապէս միջազգային ընկերակցութեան ընդհանուր ժողովը, ընտրեն ում ուզենան պատուաւոր անդամներ։

Ապա պ. Ժիւլ Սիմոն դիմելով կոնգրէսի օտարազգի անդամներին խօսք տուեց նախ Սպանիայի գրականութեան ներկայացուցչին, որը սակայն տուած խօսքից չոգտվելով, խնդրեց քարտուղարին կարդալ իր գրաւոր ճառը։ Այդ ընթերցանութեան աւարտվելուց յետոյ, Ժիւլ Սիմոն դիմելով Գրիգոր Արծրունուն, հրաւիրեց նրան խօսել թէ հայոց գրականութեան անունից և թէ կոնգրէսի օտարազգի անդամների անունից։

Հրաւիրված լինելով մօտենալ նախագահական սեղանին, ես պատիւ ունեցայ հետևեալը կարդալ։

«Ես արդէն պատիւ ունեցայ, պ. նախագահ, ներկայացնել ժողովին իմ կարճ զեկուցումս ռուսահայոց արդեան գրականութեան մասին, որը և տպագրվեց, այժմ թոյլ տուեցէք ինձ, ժողովի փակման րոպէին, աւելացնել այդ զեկուցմանը հետևեալ խօսքերը։ Մի հայ հրապարակախօս-զբոսողի ներկայութիւնը ձեր շրջանում ապացոյց է, մի կողմից, այն համակրութեան, որը միշտ ունեցել են հայերը դէպի եւրոպական ամեն տեսակ մտաւոր շարժում, իսկ միւս կողմից ապացոյց է ձեր համակրութեան դէպի հայերը։ Ես արդէն պատիւ ունեցայ ասել իմ կարճ զեկուցման մէջ, որը ներկայացրել եմ կոնգրէսի երրորդ յանձնաժողովին, որ ինչպէս չորրորդ դարում հայերը միակ արևելեան ազգութիւն էին, որը խելք ունեցաւ քրիստոնէութիւնն ընդունելու, այնպէս էլ տասն և իններորդ դարում դրանք միակ ազգութիւն են ամբողջ Ասիայում, որը իր բազմաթիւ դպրոցներով, իր նորահաս գրականութեամբ, իր նորահաս լրագրութեամբ, իր ազգային թատրոնով, եւրոպական նշանաւոր գրքուածների իր բազմաթիւ թարգմանութիւններով, խելք ունեցաւ հասկանալու եւրոպական քաղաքակրթութեան յարվելու, այդ քաղաքակրթութեան մասնակցելու անհրաժեշտութիւնը։ Այժմ կովկասեան հայերի մի մեծ խմբի անունից, նրանց մանաւանդ հայոց մամուլի մի օրգանի անունից, որը ես ինքս հիմնեցի և ղեկավարում եմ 17 տարի շարունակ, ես պատիւ ունեցայ գալ իմ հեռաւոր երկրից, որպէս զի ողջունեմ գրողների միջազգային կոնգրէսը, որը գումարված է համակրելի Պարիզում, Ֆրանսիայի համակրելի նախաձեռնութեամբ և որին նախագահում է մի հռչակաւոր մարդ, որը ոչ թէ միայն Ֆրանսիայում, ոչ թէ միայն միջազգային եւրոպական գրականութեան մէջ, այլ և մեզ մօտ, հեռաւոր Ասիայում՝ կրում է մի փառաւոր անուն։ Դուք ինձ պատիւ արեցիք պարոններ, մասնակցել տալով ինձ կոնգրէսի աշխատանքներում և այժմ, երբ կոնգրէսը փակվելու վրա է, ես կը վերադառնամ հայրենիքս, հետս տանելով ամենագեղեցիկ յիշողութիւններ ֆրանսիական հիւրասիրութեան մասին, հետս տանելով և այն համոզմունքը, որ դուք անուշադիր չէք դէպի հայոց գրականութիւնը ու հայերի մտաւոր շարժումը և ես թոյլ եմ տալիս ինձ ամենաջերմ տենչանքներս յայտնել, որ ֆրանսիական հանճարը, միացած միջազգային գիտութեան և գրականութեան ամենալաւ ոյժերի հետ՝ մեզ միշտ ղեկավարէ, միշտ փայլէ մեզ համար որպէս մի ղեկավարող, մի լուսատու փարոս։ Իմ համակրութիւնս և զգացմունքներս յայտնելուց յետոյ, չեմ կարող ձեզ չը յայտնել և ընկերակիցներիս, կոնգրէսի օտարազգի անդամների կողմից նոյն համակրութեան զգացմունքները։ Կոնգրէսում ներկայ գտնվող օտարազգի անդամների անունից էլ ներկայացնում եմ ձեզ մեր բոլորիս երախտագիտութեան զգացմունքը ձեր հիւրասիրութեան համար և նրանց անունից էլ ամենաջերմ ցանկութիւններ եմ յայտնում մեր ապագայ կոնգրէսների աջողութեան համար»։

Ես բաղդաւոր եղայ տեսնելու, որ խօսքերս մեծ համակրութեամբ ընդունվեցան ժողովականներից, բայց մանաւանդ շատ բաղդաւոր եղայ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Յունիսի 27-ին

Մեր փոքրիկ քաղաքը իր նախկին անմխիթար դրութեան մէջ է. նոյն մեռելութիւնը և անգործունէութիւնը տիրապետում են ամենուրեք թէ հայ և թէ թուրք հասարակութեան մէջ. տարիներ առաջ միակ մխիթարական բանը, որ կարողացանք նկատել, այդ մաքուր, առողջարար և մշտական ջուր ունենալու խնդիրն է, որ վերջապէս, թէև ուշ, սկսել է զբաղեցնել Նուխեցի հայերին։

Դեռ արանից 10—20 տարի առաջ Նուխու արևմտեան մասի, «Ենգիքեանդ» կոչվող թաղի հայ ժողովուրդը վայելում էր խմելու մաքուր ջրի կատարեալ առատութիւն. իւրաքանչիւր փոքր ի չնչէ նշանաւոր փողոց ունէր իր մի կամ երկու աղբիւրը, և տեղացի հայ ամեն մի կին, կամ աղջիկ,—Նուխում առհասարակ կանայք են բերում ջուրը,—առանց թուրք շրջմոլիկների հայհոյանքներին և լկտի սրախօսութիւններին ենթարկվելու և առանց մի զգալի նեղութեան, համարեա իր բակից մատակարարում էր իր տան ջուրը։ Բայց անցան այդ բաղդաւոր ժամանակները, և վերջին 10—15 տարվայ հեղեղները փչացրին, աւերեցին հայերի բոլոր աղբիւրները. այժմ ստիպված են գնալ հեռու աղբիւրներից ջուր բերելու և այսօր ամենքը տեսնում են այն անպատուութիւնը, որին ենթարկվում են թուրքերի «մահլաներում» ջրի գնացող կանայք. ներկայ տարվայ անձրևային և հեղեղառատ գարունը վերջին հարուածը տուեց մեր աղբիւրներին. եղած թուրքերի աղբիւրներն ևս դադարեցան հոսելուց և այժմ Նուխեցիք ստիպված են գործածել «Գիշ-չայ» գետակի կեղտոտ և պղտոր ջուրը։ Եթէ յիրաւի մարդուս առողջութեան գլխաւոր պայմաններից մէկն էլ մաքուր և առողջարար ջուրն է, ապա ուրեմն ամենայն իրաւամբ կարելի է վերջինիս բացակայութեանը վերագրել թոքախտի այն բազմաթիւ զոհերը, որոնք զոհվեցան վերջին տարիներումս այստեղ, որովհետև Նուխին չունի այլ ևս ուրիշ մի որ և է յատկութիւն, որ նպաստաւոր լինէր այդ ախտի առաջանալուն և տարածվելուն։ Այս ամենից յետոյ հապա սթափվեցան Նուխեցիները։ Յունիսի 25-ին ս. Աստուածածին եկեղեցու ժողովրդականները, պատարագից յետոյ, խմբվելով Մարիամեան օրիորդաց դպրոցի դահլիճը և ջուր բերելու հարցի մասին երկար խորհրդակցելուց յետոյ վճռեցին ընտրել իրանց միջից մի յանձնաժողով՝ վեց անդամներից կազմված, որի պարտաւորութիւնը լինի քննել քաղաք բերելու ջրի տեղը, յատկութիւնը, ծախսը և այլն, տալով նրանց այդ մասին լիակատար իրաւունք։ Այդպէս էլ եղաւ. ընտրվեցաւ վեց անդամից բաղկացած յանձնաժողովը, որը անմիջապէս, ժողովը ցրվելուց յետոյ, մի քանի այլ անձանց ընկերակցութեամբ ուղևորվեց դէպի որոշեալ ջրի տեղը։ Ջուրը բղխում է Գիս վանքի հարաւային կողմում գտնվող բլրի ստորոտից, որ կոչվում է «Լաչին-ղայա», Նուխուց մօտաւորապէս երեք վերստ հեռաւորութեան վրա։ Ինչպէս պատմում են, այդ ջուրը 62 թուականներին Նուխեցի պ. Կամարական մօտ 14,000 բուբլի ծախսելով բերում, հասցնում է մինչև «Հին-Սովուխ-բուլաղ» կոչված տեղը, ուր և մնում է մինչև այսօր պարոնի մահուան պատճառով. այնտեղից քաղաք հասցնելու համար, յանձնաժողովի անդամների կարծիքով, հարկաւորվում է մօտաւորապէս 5,000 բուբլի, որ պէտք է հանգանակվի «Ենգիքեանդ» թաղի հայ ժողովրդից։ Ջուրը իր յատկութեամբ գերազանցում է Նուխու բոլոր ջրերին և բաւականութիւն կը տայ 20—25 աղբիւրների։ Քաղաք հասցնելուց յետոյ պէտք է շինվի երկու ջրամբար, որոնցից 12 խողովակով ջուրը պէտք է բաժանվի «Ենգիքեանդի» ժողովրդի վրա, 12 գլխաւոր կենտրոններում 12 աղբիւր բանալով, իսկ այնուհետև կարելի կը լինի աւելորդ ջուրը ծախել թուրքերին, կամ այլ մասնաւոր անձանց՝ յօգուտ հասարակաց ջրի աղբիւրների։

Կատարեալ իրաւունք ունենք յուսալու, որ յանձնաժողովը, որի անդամները ընդհանրապէս բարեխղճ անձինք են, եռանդով կը գործէ, և որ այս անգամ գոնէ Նուխեցիները սրտով կը վերաբերվեն այս մեծ և անհրաժեշտ գործին, ընդ միշտ ապահովելով իրանց առողջութիւնը։

Ա.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, յունիսի 30-ին

Կարդալով «Մշակի» № 55-ի մէջ տպված Երևանի թղթակցութիւնները, պարտաւորութիւն եմ համարում յայտնել, որ ես դիտաւորութիւն չեմ ունեցել և չունեմ Երևանում քաղաքագլխի պաշտօնի համար քուէարկվելու։

Իսկ ինչ վերաբերում է յիշեալ թղթակցութեան այն մասին, որտեղ անատրարդիր թղթակիցը այնպէս վստահ կերպով է խօսում այլոց արժանաւորութեան մասին, ես առայժմ կարող եմ միայն այսքանը ասել, որ ոչ մի արժանաւոր, պատուաւոր և ազնիւ անձնաւորութիւն չի ցանկանայ մտնել Երևանի—հասարակութեան և քաղաքային վարչութեան այժմեան գործերի մէջ, որովհետև թէ հասարակութիւնը, և թէ քաղաքային գործերը խաղալիք են դարձել այն մարդկանց ձեռքերում, որոնք իրանց հասարակական գործիչներ ձևացնելով, անխղճաբար և առանց պատկառանքի իրանց անձնական շահերին են ձգտում, Երևանի մութն անկիւններում, աւելի մութը մարդկանց չրջանները ղեկավարելով։

Գէորգ Շահխաթունեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ամառվայ սկսվելու հետ միասին Անդրկովկասի շատ տեղերում սկսվել է հունձը։ Զանազան կողմերից ստանում ենք տեղեկութիւններ ժողովրդի տնտեսական այդ ամենակարևոր ճիւղի մասին, սակայն այդ տեղեկութիւնները շատ սահմանափակ և շատ թերի են, այնպէս որ դրանց վրա հիմնվելով չէ կարելի մի որոշ եզրակացութեան գալ թէ որքան աջող կամ անաջող է այս տարի հունձը մի որ և է գաւառում կամ նահանգում։ Մենք չունենք այդ կարևոր հարցի մասին պաշտօնական կերպով ստատիստիական տեղեկութիւններ հաւաքող օրգաններ, մնում է միայն բաւականանալ մասնաւոր տեղեկութիւններով։ Ցարարաղդաբար, ժողովրդին աւելի մօտիկ կանգնած բազմաթիւ անձինք, որոնցից այդ մասին շատ տեղեկութիւններ կարելի է սպասել,—շատ քիչ ուշադրութիւն են դարձնում դրա վրա։ Ամեն օր մեր խմբագրատանը դիմվում են բազմաթիւ նամակներ և թղթակցութիւններ Կովկասի զանազան անկիւններից. այդ թղթակցութիւնները լի են՝ Աստուած գիտէ թէ ինչ տեսակ մանր-մունր և բծախնդրական լուրերով և նկարագրութիւններով,—բայց դրանց մէջ շատ քիչ տեղեկութիւններ կան այնպիսի հարցերի մասին, որոնք այժմ շատ հետաքրքրական կարող են լինել, և որոնցից է նոյն իսկ հունձի վերաբերեալ տեղեկութիւնները։ Հաւատացնում ենք, որ այդ մասին գրելը աւելի հետաքրքրական և աւելի օգտակար կը լինի, քան քահանաների և տիրացուների մասին գրած տասնեակ թղթակցութիւնները, որ ուղարկում են խմբագրատուն ամեն կողմերից մեր «տեղական շահերի մասին մտածողները»։

—

Գանձակի շրջակայ գիւղերի մասին մեզ գրում են հետեւեալը. «Գանձակի շրջակայքում գտնվում են մի երկու տասնեակ հայ, թուրք և ռուս գիւղեր։ Խեղճ գիւղացիների դրութիւնը այս տարի շատ վատ է. բերքը քիչ և հիւանդոտ, անվճարելի պարտքեր, մորեխ... կան արդեօք սրանից աւելի մեծ դժբաղդութիւններ գիւղացու համար։ Ամենափոքրիկ գիւղական համայնքն անգամ ունի 2 հազարից աւելի պարտք։ Առանց այն էլ չքաւոր մի գիւղի համար միթէ այդ ահագին պարտքը մահ չէ։ Բացի դրանից գիւղացիք պէտք է շինէին դէպի Հաջիքեանդ ամարանոցը տանող ճանապարհը, որը մի շատ մեծ աշխատանք է, և ահագին ծախսի կարօտ։ Հէնց այդ ժամանակ մորեխը իր կողմից լափում էր գիւղացիների արտերը... Գիւղացիք մի կողմից պէտք է կոտորէին և մորեխը և միւս կողմից անպատճառ պէտք է շինէին խճուղին։ Ճարահատեալ գիւղացիք մտնում են քաղաքը, չը լված տոկոսներով պարտք են առնում,—ամեն մէկ համայնքը մի քանի հազարով վարձում է կապալառուներ, որոնց յանձնում են խճուղիի շինելը, իսկ իրանք վերադառնում են արտերը, որ մաքառեն մորեխի դէմ և գիւղացիք այժմ կարծում են, որ որդուց որդի չեն ազատվելու այդ պարտքերից։»

—

Ռուսաբնակ Միխայլովկա գիւղից մեզ գրում են. «Այս գիւղը գտնվում է Ղուբայից 50 վերստ հեռաւորութեան վրա և 40 տուն բնակիչ ունի, որոնք շատ ժամանակ չէ Ռուսաստանի զանազան գիւղերից գաղթել են այդ գիւղը և իրանց համար բնակութիւն հաստատել։ Ցիշեալ գաղթականներն ունեն մի եկեղեցի և մի դպրոց. գիւղացիները պարապվում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ էլ ձկնորսութեամբ։ Չը նայելով երկրի պտղաբերութեանը և հողի առատութեանը տեղական ժողովուրդը գտնվում է աղքատութեան մէջ. դրա պատճառներից մէկն այն է, որ գիւղացիները, ամեն օր գինէատներում հարբեցողութեամբ են զբաղված։ Սովորական է տեսնել շատերին հարբած՝ օրերով փողոցների վրա ընկած, մէկի քիթը ջարդված, միւսի բերանից արիւն է հոսում և այլն։ Բագուից և Աստրախանից բեռնակիր նաւերը գալով՝ Միխայլովկա գիւղից վերցնում են ցորեն, գարի և ձկնեղէն Ռուսաստան տանելու համար։»

—

Խմբագրութեան մէջ ստացվեցաւ Սերասխից (Անդրկասպեան երկիր) պ. Սարգիս Յովհաննիսեանից 4 բուբլի յօգուտ Բաֆֆիի գրքերի հրատարակութեան, և 2 բուբլ ևս հանգուցեալի մահարձանի համար։

—

Այսօր, յունիսի 28-ին, առաւօտեան 11 ժամին, հաւաքվեցանք կօնգրէսի մի քանի անդամների հետ, որոնց թւում կային և տիկիններ ու օրիորդներ, Էյֆէլեան աշտարակից ոչ հեռու, Մարսեան դաշտում գտնվող Մամուլի բէստորանում միասին նախաճաշիկ անելու համար։ Ապա սկսեցինք այցելել ցուցահանդէսի մի քանի մասերը, սկսելով պատկերահանդէսներից։ Ցուցահանդէսը այնքան ահագին է, որ անհնարին է ուրիշ կերպ անել. պէտք է քիչ-քիչ ամեն օր տեսնել.... Մարդու գլուխը պտտվում է, չչմում է այդտեղ մտնելով։ Պարիզի այժմեան ցուցահանդէսը այնպիսի մի հրէշ է, այն աստիճան ահագին է, որ նոյն իսկ տեղացիները, նոյն իսկ պոլիցիականները, երբ նրանց հարցնում էք, մեծ մասամբ չը գիտեն որտեղ է գտնվում այս ինչ պավիլիոնը, այն ինչ մասը....

Դուրս գալով Մամուլի բէստորանից մեր աչքի առջև իր ամբողջ փառաւորութեամբ երևաց Էյֆէլեան աշտարակը, որի ծայրը արդէն Սիլսեան դաշտերից է երևում։ Քանի մարդը մտնում է այդ հրէշ շինութեան, այնքան նա սարսափեցնող տպաւորութիւն է գործում մարդուս վրա, մի և նոյն ժամանակ իր շնորհալի շէնքով հիացնելով հանդիսականին։ Իր բարձրութեամբ աշխարհիս երեսին նմանը չունեցող այդ երկաթեայ թափանցիկ աշտարակը այնքան ահագին և լայն է, չորս սիւների վրա դրված իր ստորատում, որ նրա տակով անցնող մարդիկ փոքրիկ ճանճեր են երևում.... Անթիւ անհամար հետևակներ բարձրանում և իջնում են աշտարակի սանդուղքներով և իւրաքանչիւր կէս ժամ ներքնից մինչև վերև անասելի աղմուկով և ճռնչիւնով բարձրանում է ճանապարհորդներով լի համբարձող մեքենան, որը վագոնի պէս է շինված....

Ես դեռ ևս չեմ բարձրացել աշտարակի վրա, Այսօր առաջին օրն է, որ լինձ աւելի ազատ եմ զգում և կարող եմ գոնէ աւելի ուշադրութեամբ այցելել ցուցահանդէսը։ Եթէ ոչ, մինչև որ կօնգրէսը շարունակվում էր, ամբողջ օրը զբաղված էի կօնգրէսով. առաւօտները, 9 ժամից սկսած, զբաղված էի կօնգրէսի այն կոմիսիայի մէջ, որտեղ ես անդամ էի գրված, ժամը 2-ին կէսօրից յետոյ սկսվում էին կօնգրէսի ընդհանուր ժողովները, որոնք սովորաբար մինչև երեկոյեան 6 ժամ էին շարունակվում, ապա երեկոյեան կամ գրողների շրջանի մէջ էի լինում, կամ տուն էի վերադառնում յոգնած և պէտք է տանը աշխատէի։ Եւ չը մոռանաք, որ տարածութիւնները Պարիզում ահագին են. Շանս-Էլիզէից մինչև Շոսէ Դանտէն փողոցը, կամ այդ վերջինից մինչև Գրընէլ փողոցը, կամ Տրոկադէրօից մինչև Ֆոբուր-Մոնմարտր փողոցը,—ամեն անգամ ֆիակրով գնալու համար մարդը գործ է դնում կէս ժամ, կամ երեք քառորդ ժամ։ Արդէն որքան ժամանակ է կորչում ֆիակրներով մոնգալու համար և որքան յոգնեցուցիչ է այդ անընդհատ երթևեկութիւնը ազմկալի փողոցներով՝ հազար ու մի ֆիակրների, կառքերի, սայլերի, ձիաքաշ երկաթուղու կառքերի, օմնիբուսների և հետևակների միջով.... Շատ անգամ, մարդու գլուխը կատարելապէս չչմում է այդ անընդհատ երթևեկութիւնից, այդ անասելի և միակերպ աղմուկից....

Վերջապէս այժմ ես աւելի ազատ եմ և այսօր կարողացայ վաղ առաւօտեանից գնալ ցուցահանդէսը և աւելի ուշադրութեամբ նայել ցուցահանդիսի մի քանի մասերը, այն ինչ մինչև այժմ, թէ և գնում էի ցուցահանդէս, երբ ազատ ժամանակ էի ունենում, բայց զբաղված լինելով, կարող էի ցուցահանդիսի հրաշալիքները միմիայն անցաւորդ կերպով նայել։

Այսօր, յունիսի 28-ին, առաւօտեան 11 ժամին, հաւաքվեցանք կօնգրէսի մի քանի անդամների հետ, որոնց թւում կային և տիկիններ ու օրիորդներ, Էյֆէլեան աշտարակից ոչ հեռու, Մարսեան դաշտում գտնվող Մամուլի բէստորանում միասին նախաճաշիկ անելու համար։ Ապա սկսեցինք այցելել ցուցահանդէսի մի քանի մասերը, սկսելով պատկերահանդէսներից։ Ցուցահանդէսը այնքան ահագին է, որ անհնարին է ուրիշ կերպ անել. պէտք է քիչ-քիչ ամեն օր տեսնել.... Մարդու գլուխը պտտվում է, չչմում է այդտեղ մտնելով։ Պարիզի այժմեան ցուցահանդէսը այնպիսի մի հրէշ է, այն աստիճան ահագին է, որ նոյն իսկ տեղացիները, նոյն իսկ պոլիցիականները, երբ նրանց հարցնում էք, մեծ մասամբ չը գիտեն որտեղ է գտնվում այս ինչ պավիլիոնը, այն ինչ մասը....

Դուրս գալով Մամուլի բէստորանից մեր աչքի առջև իր ամբողջ փառաւորութեամբ երևաց Էյֆէլեան աշտարակը, որի ծայրը արդէն Սիլսեան դաշտերից է երևում։ Քանի մարդը մտնում է այդ հրէշ շինութեան, այնքան նա սարսափեցնող տպաւորութիւն է գործում մարդուս վրա, մի և նոյն ժամանակ իր շնորհալի շէնքով հիացնելով հանդիսականին։ Իր բարձրութեամբ աշխարհիս երեսին նմանը չունեցող այդ երկաթեայ թափանցիկ աշտարակը այնքան ահագին և լայն է, չորս սիւների վրա դրված իր ստորատում, որ նրա տակով անցնող մարդիկ փոքրիկ ճանճեր են երևում.... Անթիւ անհամար հետևակներ բարձրանում և իջնում են աշտարակի սանդուղքներով և իւրաքանչիւր կէս ժամ ներքնից մինչև վերև անասելի աղմուկով և ճռնչիւնով բարձրանում է ճանապարհորդներով լի համբարձող մեքենան, որը վագոնի պէս է շինված....

Ես դեռ ևս չեմ բարձրացել աշտարակի վրա,

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յունիսի 24-ին, երեկոյեան ժամի 8-ին Դամուր-Բուլաղ կոչված թուրքաբնակ թաղում սպանեցին մի հայ կառապան հէնց կառքի մէջ պարանոցը կտրելով և բազմաթիւ վէրքեր հասցնելով։ Անցեալ տարի նոյն իսկ այստեղում, նոյնպէս սպանեցին մի հայ կառապան. սպանողները թուրքեր են։ Վերջին դէպքը բոլորովին նման է անցեալ տարվայ դէպքին։ Քանի մի թուրքեր կառք նստելով՝ քշել են տալիս դէպի այդ թաղը և տեղ հասնելով անմիջապէս սպանում են։ Զարագործներից մէկն է միայն ձերբակալված։»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Քանի մի օր առաջ, Գեառնի մահալում, Գեղարդի վանքի մօտակայքում, գաւառապետը մի քանի տանտեակ կօզակներով յարձակվում է մի խումբ աւազակների վրա. երկար դիմադրելուց յետոյ մի գիւղացի սպանվում է. իսկ աւազակներից մէկը, ծաղկանքէջի աւազակ Ցակովբը աջ թևքից վիրաւորվում և բռնվում է. նրան բերեցին քաղաք։ Այս աւազակը մի տարի է ինչ փախել է Սիբիրից, ուր աքսորված էր։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Այստեղ եղանակը զով է։ Բաւական ժամանակ է հիւսիսային քամին չէ դադարում փչելուց, որը թէպէտ զովութիւն է պատճառում, սակայն չէ խնայում այստեղի առատ թոզով մարդկանց աչքերը կուրացնել։ Մեր քաղաքը անընդունակ է ծովի առատ ջրից օգտվել և փողոցները ջրել։ Ժողովրդի մի մասը արդէն ամարանոց է հեռացել։»

—

ՂԱԶԱԽԻՑ մեզ գրում են. «Ղազախ նորաշէն քաղաքի փոքրիկ հասարակութիւնը վաղուց սպասում էր իր եկեղեցու հիմնադրութեանը։ Յունիսի 17-ի առաւօտը Թիֆլիսի թեմական Արիստակէս եպիսկոպոսը եկաւ Աղստաֆայի կայարանը, ուր նրան սպասում էին գործակալները, գաւառապետի աւագ օգնականը իւրայիններով և ժողովրդականները։ Ղազախ հասնելով սրբազանը տեղացի փոքրաթիւ հասարակութիւնից ընտրեց եկեղեցու քառորներ, և ապա գնացին եկեղեցու հիմնադրութեան տեղը. հանդիսին մասնակցում էին և օտար դաւանութեան պատկանողներ, նոյնպէս և տեղական զօրքը իր սպաներով։ Յունի 10-ից սկսվեց օծումն. Արիստակէս եպիսկոպոսը մի ամիսի քարոզով, ի միջի այլոց գովեց պ. Մկրտիչ Զաղէթեանցի եռանդը, որը յանձն է առել իր ծախքով կառուցանելու եկեղեցին։ Պարոնը հրաւիրեց բոլոր հանդիսատեսներին և մասնակցողներին իր տունը և փառաւոր ճաշ տուեց։

Եկեղեցու շինութիւնը, ինչպէս ասում են, 8000 ռուբլուց աւելի կը նստի։ Նոյն օրը երեկոյեան դէմ սրբազան հայրը ճանապարհ ընկաւ դէպի Բէվաղլու գիւղը այնտեղի նորաշէն եկեղեցին օծելու, իսկ միւս օրը վերադարձաւ Թիֆլիս։»

—

Յունիսի 30-ից ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ուսուցիչների խումբը՝ փոքր բացառութեամբ, ամբողջ էր այս տարի, որի շնորհով և նկատելի էր դպրոցների մէջ առաջադիմութիւն։ Յարաբաղդաբար ուսումնարանը մնում է դարձեալ նոյն անյարմար և անպէտք շինութեան մէջ։ Գանձակում տիրում է այժմ սարսափելի չոր. փողոցներում շարժում քիչ կայ. փոշին ամպերի նման բարձրանում է և շերտերով ծածկում անցորդի հագուստը և դէմքը.... Մի տաղտկացուցիչ մեռելութիւն է տիրում ամբողջ քաղաքում, կարծես չնչաւոր չը լինի....

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

—

Թիւրքահայերի ազգային սահմանադրութեան 29-որդ տարեդարձը բոլգարացի հայերի ձեռքով տօնվելու մասին արտասահմանի հայ լրագիրները գրում են հետեւեալը. «Ֆիլիպէի «Բլովտիվ» Պուլկարերէն լրագիրն և Սոֆիայի «La Bulgarie» լրագիրն համակրութեամբ հրատարակած են Հայոց Ազգային Սահմանադրութեան 29-րդ տարեդարձի հանդէսը որ կատարած են Հայերը Ֆիլիպէի մէջ։ «La Bulgarie» լրագիրը՝ որմէ կարտապենք հետեւեալ տեղեկութիւններն, Հայոց Սահմանադրութեան վրայ մի քանի տեղեկութիւններ տալէ յետոյ, կը սկսի տարեդարձի հանդիսի նկարագրութիւնն։ Ֆիլիպէի Հայերը, կըսէ յիշեալ թերթը, տեղացի մի քանի չօրպաճիների դժկամակութեանն հակառակ շատ շքեղ կերպով կատարեցին այս տարի այդ հանդէս, հրաւիրելով նաև իրենց համաքաղաքացի մի քանի Պուլկարներ, ինչպէս Ալեքսանդր Ա. անունով գիմնազիային տեսուչ Ակուրան, գաւառապետ Պ. Սալկանճիէֆը, «Բլովտիվ» լրագրի խմբագիր Պր. Սէմէրճիէֆը, և այլն և այլն։ Այս գործի նախաձեռնութիւնն ունեցած է Ֆիլիպէի նշանաւոր հայ վաճառականներէն Պ. Ակնանդեան։ Հանդէսը կատարուած է Մարիձա գետին անտառուտ և հովանաւոր մի մեծ կղզուն մէջ։ Նաւադաշնների մի խումբ սարուած էր այնտեղ որ օրուան հանդիսին յարմար երգեր կը նուագէր։ Ատենախօսութեան համար յատկապէս մի բեմ կանգնած էին, ուր մի քանի ատենաբաներ ելնելով ճառեր խօսած և միանգամայն շնորհակալութիւն յայտնած են Պուլկարիային այն վեհանձն հիւրընկալութեան համար որ շնորհած է գաղթական Հայերին։ Ճաշկերոյթի ժամանակ Պ. Ակնանդեան ոտքի ելնելով, առաջին գաւաթը առաջարկած է Բոլգարիայի իշխանի կենացը։ Այդ առաջարկ եռանդագին կեցցէի աղաղակներով ընդունուած է հանդիսականներէն։ Ալեքսանդր Ա. գիմնազիայի ուսուցիչներէն Պ. Քէսիաքոֆ սաստիկ եռանդայոյզ մի ատենաբանութեամբ բաժակ առաջարկած է Արմէնիայի համար և Պ. Բօբօֆ բաժակ առաջարկած է հայ ազգի յառաջադիմութեանը համար։ «Բլովտիվ» լրագրի խմբագիր Պ. Սէմէրճիէֆ՝ յիշեցունելով թէ Հայեր միշտ համակրութիւն ցոյց տուած են Պուլկարներին իրենց եկեղեցական և քաղաքական կռիւներին մէջ, բաժակ առաջարկած է Հայ գործիչների կենացը։ Հանդէսը շատ ուրախառիթ մի տեսարան ներկայացուցեր է և ժողովուրդը պարելով երգելով զբօսած է մինչև երեկոյ բաւական ուշ ատեն, որմէ յետոյ վերջապէս բաժնուեր են հանդիսավայրէն, իրենց հետ տանելով այդ օրի գեղեցիկ յիշատակը։»

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ

—

Ժընէվ, յունիսի 20-ին

Կանանց բարձր ուսման ընդդէմ են եղել և են ոչ միայն յետադէմ կուսակցութեան պատկանող մարդիկ, այլ և նրանք, որոնք իրանց առաջադիմութեան և իրաւունքների հաւասարութեան համակրողներ են համարում։ Մինչև անգամ ամբողջ քաղաքակրթված պետութիւններ, ինչպէս՝ Գերմանիան, Աւստրիան, և այլն արգելում են կանանց ազատ կերպով համալսարաններ մտնել։ Եթէ կինն էլ այր մարդու հետ հաւասար սկսի գործել հասարակական ասպարիզում, ապա ով պէտք է տունը կարքի բերէ, երեխաներին նայէ, կերակուր պատրաստէ, մարդուն դիմաւորէ և այլն,—կը լսէք ամեն կողմից։ Կամ թէ կը լսէք այսպիսի դատողութիւններ,—կինը թոյլ և քնքոյշ արարած է. նրա ոյժից վեր է ամեն գործում խառնվելը, մինչև անգամ անվայել է, որ նա ամեն տեսակ գործերում մասնակցէ. կինը իբրև քնքոյշ էակ պէտք է իորչի ուսումնասիրել զանազան բէալական առարկաներ, մի խօսքով կնոջ գործունէութեան ասպարէզն է՝ տունը, իսկ այր մարդու՝ դրսի, լայն աշխարհը։ Ահա այսպիսի և այս ձեի հարցեր են դնում «ընտանեկան համերաշխութիւն սիրողները»։

Կնոջ վրա այդպէս նայողները մոռանում են մի շատ կարևոր բան, որը բնութեան հետևեալ օրէնքն է։ Աշխարհիս երեսին ինչ որ շարժվում է, գործում է, նա կատարելագործվում է, զարգանում է, ուժեղանում է. ընդհակառակը՝ այն բոլորը, որոնք թոյլ շարժողութիւններ են կատարում, կամ բոլորովին չեն շարժվում, մատնված են անգործունէութեան, նրանք վերջ ի վերջոյ թուլանում են, ոչնչանում են։ Դա բնութեան օրէնք է։ Վերցնենք մի կենդանի օրինակ. եթէ թողնենք, որ մարդուս մի ձեռքը տարիների ընթացքում գործ չը դրվի, մնայ անշարժ, անկապկած վերջ ի վերջոյ կը տեսնենք, որ գործող ձեռքը թէ զարգացել, թէ ուժեղացել է, այն ինչ անշարժութեան ենթարկվածը՝ թուլացել։ Կինն էլ լինելով մարդկութեան մի մաս և դարերի ընթացքում մատնված լինելով անշարժութեան, բնականաբար թուլացել է, յետ է մնացել այր մարդուց թէ ֆիզիկապէս և թէ մտաւորապէս։

Բարեբաղդաբար գիտութեան լոյսը արթնացրել է կանանց, և ահա վերջին ժամանակներս արագ մեծանում է այն կանանց թիւը, որոնք ձգտում են ազատվել իրանց կապող շղթաներից և դրա համար միակ և ուղիղ միջոց ընտրել են անկախ աշխատանք։ Նրանք համոզված են որ միակ միջոցով, որով կարող են մարդուն վայել դիրք ունենալ՝ անկախ ապրել—այդ անկախ աշխատանքն է։ «Անկախ աշխատանքը» իրանց համար նպատակ դնող կանանցից նրանք, որոնք նիւթական միջոցների հետ ունեն և ձգտում և սէր դէպի գիտութիւնները, մտնում են զանազան բարձրագոյն դպրոցներ, ուր իրանց ուսումը աւարտելուց յետոյ գործում են հասարակական ասպարէզում, նուիրելով իրանց բժշկութեան, մանկավարժութեան և այլն։

Սկզբներում, երբ կանանց սկսեցին ընդունել համալսարաններում, նրանք իրանց ծարաւը յագեցնում էին միայն տեսական գիտութիւններով, իսկ վերջերս, երբ կանանց ևս գիտութեան շատ ճիւղերում մարդկանց հետ հաւասար իրաւունքներ տուին, կանայք սկսում են ուսումնասիրել և գործնական առարկաները։ Աչքի առաջ ունենալով կին-բժիշկների մեծ կարևորութիւնը, կանանց մի մասը նուիրում է իրան բժշկութեան։

Անկասկած հիանալի կինը, ուր որ լինի, մանաւանդ արևելեան երկիրներում, մեծ ուրախութեամբ, հաւատով և որ գլխաւորն է՝ առանց քաշվելու դիմում է կին բժշկի օգնութեան, քան տղամարդ բժշկին։ Եւ ահա, ինչպէս տեսնում ենք, վերջին տարիներում կին-բժիշկների թիւը աճելով աճում է։ Շվէյցարիայի՝ Բէրն, Ցիւրիխ և Ժընէվ համալսարանների ուսանողուհիների մեծամասնութիւնը ուսումնասիրում է բժշկութիւն։ Օրինակ,

բայց գիտաւորութիւն ունեմ այս օրերս բարձրանալու։

Ձեմ նկարագրի ձեզ ահագին պատկերահանդէսը, որը ինքն ըստ ինքեան կազմում է արդէն մի առանձին ցուցահանդէս, բաղկացած մի քանի պավիլիոններից, և բազմաթիւ դահլիճներից, որոնք պարունակում են իրանց մէջ իւղանկարներ, ակվարելներ, պաստէլներ (գոյնզգոյն մատիներով նկարչութիւններ) և քանդակագործութիւններ։ Այդ բոլոր ընդարձակ պավիլիոնները և դահլիճները հրաշալի կերպով են շինված և լոյսը ընկնում է նկարների վրա ապակեայ առաստաղներից։

Դուրս էք գալիս պատկերահանդիսի դահլիճներից և անմիջապէս ընկնում էք մի բոլորովին տարբեր աշխարհ. անթիւ, անհամար բէստորաններ և կաֆէներ, որոնց չքեղութիւնը, զարդարանքները, հայելիներով ծածկված պատերը,—շլացնում են այդ տեսակ չքեղութեան անսովոր մարդուն։ Կաֆէներից մինում ածում է ունգարացի երաժիշտների օրկէստրը, որը բաղկացած է ազգային նկարչական հագուստներով հագնված երկու սեռի երաժիշտներից, մի այլ կաֆէում ածում է ռուսաց ազգային զգեստներով հագնված կանանց օրկէստրը, որը ղեկավարում է մի կին (ասում են մի ռուս իշխանուհի), մի երրորդ բէստորանում լսում էք բուն եւրոպական օրկէստրի հնչիւնները.... Շքեղ կաֆէների և բէստորանների կողքին գտնվում են մագազիններ, այլ և այլ տեղեկութիւնների համար փառաւոր գրասենեակներ, փոստը, հեռագրատունը և այլն....

Ժամը 12-ին սկսեցինք մանդալ, անկատելի կերպով չորս ժամ էինք մանգալիս և դեռ գրեթէ աչինչ չը տեսանք, թէև շատ բան ենք նայել։ Այդ.է բոլոր այցելուների վիճակը.... Արդէն կէսօրից յետոյ ժամը 4 է և մենք պէտք է տուն վերադառնանք, որը դարձեալ բաւական հեռու է ցուցահանդիսից, փոքր ինչ հանգստանանք, իսկ ճիշդ ժամը 6-ին պէտք է գտնվենք Quai d'Orsay գետեզրում, որպէս զի նստենք «Touriste» շոգենաւի վրա, Պարիզից մի քանի ժամ հեռու գտնվող Սիւրէն ասված տեղը գնալու համար։ Շոգենաւի վրա Սէն գետով լողալու ժամանակ պիտի տրվի մեզ, կօնգրէսի անդամներիս, մի ճաշկերոյթ, որտեղ մենք վերջին անգամ պիտի տեսնվենք իրար հետ, և միմեանց «մնաս բարև» ասենք Սիւրէնից Պարիզ վերադառնալով։

Ճիշդ ժամը 6-ին հաւաքվել էր աւելի քան 100 հոգուց բաղկացած հասարակութիւն «Յուրիստ» շոգենաւի վրա։ Հասարակութեան մէջ կային տիկիններ և օրիորդներ։ Հասարակութեան մէջ կային և ֆրանսիացիք, և իտալացիք, և սպանիացիք, և գերմանացիք, և դանիացիք, և շվէդացիք, և լեհացիք, և ռուսներ և այլն։ Անմիջապէս ճաշի նստեցան թէ շոգենաւի վերևի, բաց տեղում և թէ կալուտների մէջ։ Ճաշկերոյթը շատ լաւ և ուրախ անցաւ։ Զարմանալի թարմութիւն են պահպանում եւրոպացիք նոյն իսկ հասակ առնելով։ Դանը, լուրջ մարդիկ գիտեն ուրախանալ, զուարճանալ երեխաների պէս.... Ուրախ խօսակցութիւն, սիրալիր վարմունք, երգ, կեցցէներ, անվերջանալի ճառախօսութիւններ, նոյն իսկ պար,—այդ է դրանց յատկանիշը այդ տեսակ զբօսանքների ժամանակ։ Ճաշից յետոյ բոլորս հաւաքվեցանք շոգենաւի վերևում. ես բաղդ ունեցայ դարձեալ նոր ծանօթութիւններ կապելու։ Մի բելգիացի գրող խնդրեց ինձ թոյլ տալ հայոց արդեան գրականութեան մասին կօնգրէսին իմ տուած զեկուցումս արտասպել Անտվէրպէն քաղաքում հրատարակվող մի ամսագրի մէջ, որը յատկապէս զբաղվում է արևելքով, նոյն խնդրանքով դիմեց ինձ և մի գանիացի լրագրական թղթակից։ Գրողների միջազգային ընկերակցութեան փոխ-քարտուղարներից մին խնդրեց ինձ, երբ Թիֆլիս վերադառնամ, հասցնել ընկերակցութեան դրասենեակին իմ ունեցած գրուածները հայերի մասին։

Արդէն ժամը 10 էր դարձել. ճառախօսութիւնները շարունակվում էին և իւրաքանչիւր ճառախօս վարձատրվում էր ոգևորված ծափահարութիւններով. խօսեցին՝ ընկերակցութեան նախագահ պ. Բատիզբօն, պ. Հէնրի դը Բօրնիէ, պ. Ժիւլ Լէբմինա, խօսեցինք և մենք բոլոր օտարազգիներս, մեր շնորհակալութիւնը յայտնելով ֆրանսիական հիւրասիրութեան համար։ Շոգենաւը լուսաւորված էր բազմաթիւ գոյնզգոյն լապտերներով և շոգենաւի առջևի մասում գրեթէ անընդհատաբար ածում էր փոքրիկ օրկէստրը։

Ժամը 11-ին երեկոյեան շոգենաւը սկսեց մօտենալ Պարիզին։ Հրէշ քաղաքը արդէն լուսաւորված էր անթիւ բոցերով և ամբողջ քաղաքին տիրապետում էր էլէկտրական պայծառ լուսով լուսաւորված՝ Էյֆելեան հրէշ աշտարակը, շրջապատված ցուցահանդիսի ահագին շինութիւններով։ Նաւամատոյցին մօտենալու ժամանակ, անցնելով Սէն գետի վերջին կամուրջներից մինի կամարների տակով, կամուրջի վերևից ահագին ամբոխը բարևեց լապտերներով լուսաւորված մեր շոգենաւը ազմկալի կեցցէներով, որոնց շոգենաւի վրա եղածները նոյնպէս պատասխանեցին կեցցէներով և օրկէստրը անմիջապէս սկսեց ածել «Մարսէլիէզ» ազգային երգը։

Ժամը 11-ից քիչ անց ափ իջանք։ Թէև սաստիկ յոգնած արած զբօսանքից, ես դարձեալ քայլերս ուղղեցի դէպի ցուցահանդէսը, ունենալով մի ժամի չափ ժամանակ մինչև ցուցահանդիսի փակվելը (ցուցահանդէսը ամեն օր փակվում է 12 ժամին, կէս գիշերին), որպէս զի տեսնեմ ցուցահանդէսը, իր բոլոր շինութիւններով, հրաշալի այգիներով, ծաղկանոցներով և ֆօնտաններով՝ գազային, բենգալեան և էլէկտրական լուսով լուսաւորված։ Եւ ճշմարիտ գիւթական, ֆանտաստիական, աննկարագրելի տեսք է ներկայացնում ցուցահանդէսը գիշեր ժամանակ։ Մանաւանդ հրաշալի է Մարսեան դաշտի վրա, ցուցահանդիսի գլխաւոր շինութեան առջև գտնվող ահագին լիճը իր անթիւ ֆօնտաններով։ Ահագին բարձրութեամբ խփող այդ ֆօնտանները գիշեր ժամանակ ոչ թէ միայն իրանց ձևն են փոխում, բայց և դրանց միջից դուրս ցայտող ջուրը անդադար իր գոյնն է փոխում.... Ցանկարծ բոլոր ֆօնտանները ներկվում են արիւնի պէս կարմիր գոյնով, ապա քսանի չափ այդ ֆօնտանները ներկվում են կանաչ, այնուհետև կապոյտ գոյնով, յետոյ ջուրը դառնում է ոսկեփայլ, կամ արծաթափայլ, կամ վերջապէս ֆօնտանների մէկից բղխում է կանաչ գոյնի ջուր, միւսից կարմիր, երրորդից սպիտակ, չորրորդից կապոյտ....

Մարդ անձամբ պէտք է տեսնի այդ բոլոր հրաշալիքները, իսկ գրչով անկարող եմ նկարագրել այն բոլոր բաղմակողմանի տպաւորութիւնները, որ մարդ դուրս է բերում այդ անսովոր և դիւթական տեսարաններից, որոնց գոյութիւնը արգասիք է ժամանակակից տեխնիկական գիտութեան անբնակայելի կատարելագործութեան....

Ցողնած օրվայ բաղմակողմանի, խիստ տպաւորութիւններից,—ես ուշ գիշերին տուն վերադարձայ և անմիջապէս մեռածի պէս քնեցի, չը նայելով որ բնակարանիս պատուհաններից դեռ երկար ժամանակ շարունակվում էր լսվել փողոցային աղմուկը և անցնող անթիւ կառքերի ձայնը։

Գրիգոր Արծրունի

Ժընէվի համալսարանում բժշկութիւն սովորում են 28 հոգի, բնագիտական առարկաներ 14, փիլիսոփայութիւն և գրականութիւն 18։

Շնորհիւ Ժընէվ համալսարանի վարչութեան այս տարվայ նոր կանոնադրութեան բժշկական ֆակուլտէտի ուսանողուհիների թիւը զգալի կերպով մեծացաւ։ Նոր կանոնադրութիւնը հետևեալն է. բժշկական ֆակուլտէտ ընդունվում են իբրև իսկական ուսանող այն բոլոր անձինք, որոնք ունեն կանանց գիմնազիաներից վկայական 7-որդ թէ 8-դ դասատան, այդ մի և նոյն է։ Այն ինչ անցեալ տարիները նոյն վկայականներով բոլոր ֆակուլտէտներում կարելի էր կանոնաւոր ուսանող դրվել, բացի բժշկականից։ Ժընէվ համալսարանի ուսանողուհիների թիւը 60 է. դրանցից 53 հոգի օտարուհիներ են, իսկ 7-ը չվեյցարացի։ Օտարուհիները՝ ռուս և հրէայ 23, լեհացի 15, գերմանացի 4, հայ 3, սերբիացի 3, ամերիկացի 2, յոյն, բելգիացի, չօլանդացի մէկ-մէկ։ Ժընէվում ընդամենը 3 հայուհիներ կան, որոնցից 2-ը ուսանում են բժշկութիւն, 1-ը գրականութիւն։

Մ. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սերբիական նախկին մինիստր-նախագահը այժմ տեղափոխվել է և բնակվում է Գրացում։

—Ինչպէս հեռագրում են Հռոմից, արդէն Վատիկանից շատ իրեղէններ արտասահման ուղարկվեցան։ Պապը մտադիր է պատգամաւորութիւն ուղարկել բոլոր կաթոլիկ պետութիւնների մօտ՝ բացատրելով այն պատճառները, որոնք ստիպում են կաթոլիկ եկեղեցու պետին հեռանալու Հռոմից։

—Իտալո-աւստրիական նոր դաշնակցութեան վերաբերեալ լուրերը, ինչպէս գրում են Հռոմից, շարունակում են յուզել հասարակաց կարծիքը։ Իտալացի հայրենասէրները երևակայել չեն ուզում, թէ ինչպէս կարող է իտալացին կռուել աւստրիական դրօշակի տակ՝ Աւստրիայի համար։ Ենթադրում են, որ այդ մասին պատգամաւորների ժողովում բուռն հարցապնդումներ կը լինեն։

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովը աւարտեց բիւդժէտի քննութիւնը. այդ բիւդժէտը արդէն ներկայացրած է սենատին։

—Կրիտէ կղզուց գրում են, որ թիւրքաց կառավարութեան լիազօր ներկայացուցչի այնտեղ գալը, կարելի է ասել, աւելի վատ ազդեց գործերի վրա, քան թէ լաւ։ Ազգաբնակութիւնը աւելի խիստ է պնդում իր պահանջների վրա, որովհետև թիւրքաց կառավարութեան ներկայացուցիչը հէնց սկզբից թշնամաբար սկսեց վերաբերվել դէպի ժողովրդի յարուցած խնդիրները։

—Սոֆիայից գրում են, որ Աւստրիայի բռնած դիրքը դէպի Բուլգարիան կարող է մեծ փոփոխութեան ենթարկել թիւրք-բուլգարական յարաբերութիւնների եղանակը։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՐԻԶ, 30 յունիսի։ Երէկ պատգամաւորների ժողովում կրկին սկանդալ պատահեց.—երբ ներքին գործերի մինիստրը յայտնեց, որ քանի իր ձեռքումն է իշխանութիւնը, նա կը ստիպէ յարգել կարգը և օրինականութիւնը, բուլանժեան Լագեր խիստ կերպով յարձակվեց կառավարութեան վրա և բարձրագոյն ատեանը արդարադատութեան ծիծաղելի հետևողութիւն անուանեց։ Այդ բանի համար Լագեր զրկվեց խօսքի իրաւունքից. բայց նա հրաժարվեց հեռանալ ամբիոնից, այդ պատճառով հարկ եղաւ ժողովը փակել։ Նիստը վերանորոգելուց յետոյ, Լագեր շարունակում էր պնդել իր նախկին կարծիքների վրա, որի պատճառով և ժամանակաւորապէս հեռացվեց ժողովից։—Երէկ երեկոյեան մեղադրական մասնաժողովը վճռեց՝ Բուլանժէին, Դիլիոնին և Բոշֆորին ենթարկել բարձրագոյն դատի։

ՊԱՐԻԶ, 30 յուլիսի։ Լուր է ստացված անգլիական զօրքի տեղ հասնելու մասին, որ ուղարկված է Եգիպտոս Մալտայից և Կիպրոսից։ Ենթադրում են որ արշաւանքը ուղղված կը լինի դէպի Դոնգօլ գուցէ և դէպի Բերբեր։

ՏԱՇԿԵՆՏ, 30 յունիսի։ Երկրաշարժից Զարկենտ քաղաքը կիսով չափ աւերվեցաւ։ Պետերբուրգի բօրսա. կալուածական բանկերի գրաւական թղթերը—Թիֆլիսինը՝ 97¾, Ռոթայիսինը 98½։ Թիֆլիսի քաղաքային կրէդիտային ընկերութեան օբլիգացիաները՝ 84½։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յուլիսի։ Հրատարակված է զինուորական խորհրդի որոշումը, որը վերաբերում է գեներալներին և շտաբ ու օբէր-օֆիցերներին իրաւունք տալուն, որով նրանք կարող են մնալ զօրաբանակի պահեստի մէջ՝ ազնուականութեան պարագլխների պաշտօններում եղած ժամանակ։

ՎԻԵՆՆԱ, 1 յուլիսի։ Տրիեստում բնակվող հարուստ չէրնօգորցիները հանգանակութեամբ փող են հաւաքում, որով պէտք է իշխանուհի Միլիցային մի ազգային ընծայ տան. այդ ընծան լինելու է մի ադամանդեայ վարսակալ։

ԱԹԷՆՔ, 1 յուլիսի։ Այս գիշեր Կրիտէ կղզուց ստացած հեռագիրները այստեղի քաղաքական շրջաններում մեծ յուզմունք առաջ բերեցին։ Զինաւորված խմբերի թիւը աւելանում է. մի քանի հազար մարդիկ հաւաքվելով ընտրել են մի մասնաժողով, որը հրատարակել է պրոկլամացիա, առաջարկելով կրիտացիներին հրաժարվելու հարկերի վճարելուց, եթէ մինչև անգամ դրա համար հարկ լինի ոյժի դիմել։ Լուր կայ, որ չուտով գալու են մի ռուսաց և երեք անգլիական զինուորական նաւեր։

ՊԱՐԻԶ, 2 յուլիսի։ Պատգամաւորների ժողովի այս օրվայ նիստում ձախակողմեանները ներկայացրին՝ Բուլանժէի դէմ ուղղած մի օրինագիծ, որով արգելվում է մի և նոյն մարդու թեկնածութիւնը մի քանի շրջաններում։ Աջակողմեանները և բուլանժեանները բողոքեցին. ժողովը այդ օրինագծի քննութիւնը անյետաձգելի համարեց. տեղի ունեցան աղմկալի տեսարաններ. հարկ եղաւ ժամանակաւորապէս դադարեցնել նիստը։ Ժողովը պատգամաւոր Լէ-Գէրիսսէին ժամանակաւորապէս հեռացրեց։ Լէ-Գերիսէ հրաժարվեց հեռանալ հռետորական ամբիոնից. հարկ եղաւ զինաւորված ոյժով հեռացնել նրան։ Ապա ժողովը ընդունեց օրինագիծը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յուլիսի։ Այսօր ներքին առաջին փոխառութեան տոմսակների խաղարկութեան ժամանակ գլխաւոր գումարները ընկան հետևեալ տոմսերի վրա։

№ սերիայի	№ տոմսի	Գումարը	№ սերիայի	№ տոմսի	Գումարը
10,409	22	200,000	12,210	38	4,000-ական
10,682	9	75,000	3,270	12	
7,516	35	40,000	7,062	16	
2,415	12	25,000	44	10	
14,118	17	10,000	14,146	21	
17,388	38	10,000	4,908	29	
17,208	47	10,000	1,636	39	
17,418	14	8000-ական	9,704	33	
4,346	5		9,637	13	
6,809	29		10,145	11	
11,366	23		372	49	
1,601	19		17,970	17	
7,430	34		12,465	11	
15,105	23	5,000-ական	732	7	1,000-ական
10,145	8		7,402	44	
18,674	7		5,716	10	
12,557	6		7,944	17	
7,430	4		1,680	10	
3,366	32		8,410	19	
12,923	10		3,691	16	

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունիսի 30-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	97	ր.	75 ›
Բերլինի վրա 100 մարկ —	47	›	75 ›
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38	›	70 ›
Ոսկի — արժէ —	7	›	75 ›
Մաքսային կուպոններ —	155	›	50 ›
Արծաթ — — —	1	›	13 ›
Բօրսային դիսկոնտներ —	6 և 7%		›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	›	— ›
— — — — 2-րդ —	98	›	75 ›
— — — — 3-րդ —	98	›	62 ›
— — — — 4-րդ —	98	›	62 ›
— — — — 5-րդ —	98	›	62 ›
— — — — 6-րդ —	98	›	62 ›
Նոր 4%	83	›	50 ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	›	— ›
— — 2-րդ —	99	›	— ›
— — 3-րդ —	98	›	87 ›
Նեղքին 5% առաջին փոխառութ.	268	›	50 ›
— երկրորդ —	244	›	50 ›
5½% բէնտա.	102	›	50 ›
Ոսկեայ բէնտա.	157	›	— ›
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ.	142	›	25 ›
Նոր երկաթուղային բէնտա	98	›	75 ›
5% գրաւակ. թղթեր կալուսդ. փոխ. կրեդ. ընկ. մետ.	138	›	— ›
— — թղթադ.	92	›	87 ›
Գրաւ. թղ. Ազն. բանկի	98	›	25 ›
Գիւղական բանկի	102	›	50 ›
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	—	›	— ›
— —Ռոթայիսի-18 և 43տ.	—	›	— ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94	›	75 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94	›	— ›
Օդեսայի — —	95	›	25 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	—	›	— ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱԳՈՒ. Աղաջան Մխիթարեան. Մեր խմբագրատանը չեն վաճառվում լուսանկար փափազեանի նկարները։ Այդ մասին «Աղբիւրի» յայտարարածը ճիշդ չէ։

ԹԻՖԼԻՍ. Լուսանկար Մ. Փափազեան. Բագուից պ. Ա. Մխիթարեանից ստացանք 10 բուբլի, ձեր «Հնութիւնք հայրենեաց» նկարների ժողովածուի մի օրինակի գին։ Ստացէք այդ 10 բուբլին և ուղարկեցէք պարոնին այդ ժողովածուն։

Ժամանակաւոր խմբագիր Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

մատուցած լինելով Նորին Վեհափառութեան ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆԵՐ ՅԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ՄԻՆՉԵՒ ԱՑԺՄ ՆԵՐԿԱՑԱՑՐԱԾ ԽՆԴԻՐՆԵՐՆ՝ այսուհետև նոյնպիսի խնդիրներով դիմել կամեցողներին խնդրում է վարվել դպրոցական նոր կանոնադրութեան 41 յօդուածի համաձայն։

1—2

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ

Առակ չափահասների համար

ԳԷՈՐԳ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆՑԻ։

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

1—10

С. А. ЕГІАЗАРОВЪ

ИЗСЛѢДОВАНІЯ ПО ИСТОРІИ УЧРЕЖДЕНІЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ

ЧАСТЬ 1

СЕЛЬСКАЯ ОБЩИНА

Сословный строй, внутренняя организація и управленіе общины въ связи съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.

Цѣна 2 р. 75 к.

Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина.

1—10 (b)

Լոյս տեսաւ

ՑԵՑԵՐ

վէպ

աշխատութիւն Պերճ Պռօշեանի։

Ծախվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում։

Գինն է 1 բուբլի։

1—5

Լոյս տեսաւ մամուլի տակից

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նոր ուխտի, աշխատասիրութիւն Սահակ քահանայ Սահակեանցի։ Գինն է 35 կ.։ Նոյն անձի աշխատասիրութեամբ լոյս են տեսել

2) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին ուխտի, գինն է 30 կոպ.

3) ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ հին-ուխտ, գինն է 1—75 կ.

4) Մի ՔԱՆԻ ԹՕՍՔ հայ կրօնուսոյցների, գինն է 10 կոպ.

Դիմել Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը։

1—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,

որ բաւական ժամանակ պարապել է վաճառականութեամբ, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄՏՆԵԼ վաճառականի կամ կապալառուի մօտ. համաձայն է և քաղաքից դուրս ծառայելու։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի" խմբագրատանը։

2—4

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մատները փոքելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

ծախվում է դեղատներում և դրօգիստների մօտ Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և Կայսրութեան բոլոր քաղաքներում։ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, հնարողի, դեղատան տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, Էլէկտորալնայա փողոց, № 39. Գալմանինի մեծ արկղը արժէ Վարշավայում 50 կ., փոքրը 30 կոպ.

ՊԷՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու գործածութեան բացատրութիւնը և փարիզի ցուցահանդիսի մեդալները։

Ц. 24869 3—10 (b)

Въ редакціи газеты „МШАКЪ" продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ", публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ", или Tiflis, Redaction „Mschak". (b)

Дозволено цензурою, Тифлисъ 3 Іюля 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. кав.